ԱՍՏՂԻԿ ՕՀԱՆՅԱՆ

ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻ ԽԱԽՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

DOI : 10.24234/journalforarmenianstudies.v2i73.251

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը ներկայացնում է Խոսե Օրտեգա–ի–Գասեթի «արվեստի ապամարդկայնացման» և Հովհաննես Գրիգորյանի «բանաստեղծության անհետացման» գաղափարների համեմատական վերլուծությունը՝ դիտարկելով դրանց արտացոլումը Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել, թե ինչպես են երկու՝ առաջին հայացքից հակադիր տեսական մոտեցումները համընկնում նույն գեղարվեստական երևույթի՝ իրերի հիերարխիայի խախտման մեջ:

Հոդվածում կիրառված են համեմատական–վերլուծական և տեքստաբանական մեթոդներ՝ օգտագործելով գրականագիտական աղբյուրներ և բանաստեղծական տեքստերի վերլուծություն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խոսե Օրտեգա–ի–Գասեթի ներկայացրած հիերարխիայի շրջումը, որ նպաստում էր իրականությունից արվեստի աշխարհ փախուստին, Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում դառնում է իրականության կարևոր խնդիրներն անտեսելու միջոցով առավել ընդգծելու մեթոդ:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Հովհաննես Գրիգորյան, Խոսե Օրտեգա–ի–Գասեթ, սուպերռեալիզմ, ինֆրառեալիզմ, պոետիկա, հիերարխիայի խախտում, գեղարվեստական մեթոդ, ժամանակակից պոեզիա, կարևորի և անկարևորի հակադրություն*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1970 թ. «Գրական թերթ» շաբաթաթերթի 45–րդ համարում լույս տեսավ Հովհաննես Գրիգորյանի «Թե ինչպես «անհետացավ» բանաստեղծությունը» հոդվածը, որը պատասխան էր ժամանակի գրական մամուլում տարածված երիտասարդական պոեզիայի շուրջ բանավեճին: Գրիգորյանը հայտարարում էր «բանաստեղծության անհետացման» մասին՝ նկատի ունենալով բանաստեղծության մարդկայնացումը. «Մարդ սպանելու արվեստի կատարելագործման ընթացքին զուգահեռ ճշմարտանում, «ապարվեստանում» է արվեստը, ուրեմն և՝ «ապաբանաստեղծանում» է բանաստեղծությունը և իր առաջընթացի մեջ դառնում ավելի մարդկային ու մարդամոտ» **(Գրիգորյան Հ., 1970)**:

Վերոնշյալից շուրջ կես դար առաջ՝ 1925 թ., իսպանացի փիլիսոփա և մշակութաբան Խոսե Օրտեգա–ի–Գասեթը, խոսելով ժամանակի նոր ստեղծվող գրականության մասին, հայտարարել էր արվեստի ապամարդկայնացման մասին **(Օրտեգա–ի–Գասեթ Խ., 2019)**: Նկատելի է, որ մշակույթի այս երկու գործիչների՝ առաջին հայացքից հակադիր հայտարարությունները իրականում վերաբերում են նույն երևույթին: Վերջինս ակնհայտ է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ հենց Հովհաննես Գրիգորյանն է հայերեն թարգմանել Խոսե Օրտեգա–ի–Գասեթի «Մշակույթի փիլիսոփայություն» ժողովածուն:

Այսպիսով՝ երկու հեղինակներն էլ տարբեր եզրույթներով նկարագրում են ստեղծագործական նույն միտումը՝ իրերի հիերարխիայի խախտումը, որի հիման վրա ձևավորվում է հոդվածի հետագա վերլուծությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում հիերարխիայի խախտման դերը և նշանակությունը բացահայտելու համար կիրառվել է համեմատական վերլուծության մեթոդը՝ երկու հեղինակների տեսական մոտեցումների զուգադրման համար: Ինչպես նաև կիրառվել է տեքստաբանական վերլուծության մեթոդը՝ բանաստեղծական օրինակների կառուցվածքային, թեմատիկ և գեղագիտական ուսումնասիրության համար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խոսե Օրտեգա–ի–Գասեթը «Արվեստի ապամարդկայնացումը» էսսեում, նպատակ ունենալով բացահայտելու նոր երաժշտության ոչ հանրամատչելիության ֆենոմենը, սահմանում է նաև ժամանակակից արվեստի առանձնահատկությունները և մաքուր արվեստ ստեղծելու փորձերը: Ըստ Օրտեգա–ի–Գասեթի՝ իրականությունից խույս տալու համար բանաստեղծները դիմում են փոխաբերության «սուպերռեալիզմին» կամ ինֆրառեալիզմին: Եվ ահա «Բանաստեղծական «վեհացումը» կարող է փոխարինվել բնական հեռանկարի «մարդկայինից ներքև իջեցումով» **(Օրտեգա–ի–Գասեթ Խ., 2019)**: Նոր արվեստում նա նկատում է իրերի հիերարխիայի խախտում. այն է՝ անկարևորին առավել կարևոր կոչում տալը: Մարդու աշխարհընկալման մեջ, ինչն արտահայտվում է նաև արվեստում, իրերը և դրանց հասկացությունները ունեն որոշակի դեր և դիրք, դրանով ստեղծվում է իրերի հիերարխիան: Սա այն մասին չէ, որ կա բարձր և ցածր արվեստ, արվեստին «հարիր» և «ոչ հարիր» երևույթներ, արվեստի և կենցաղի լեզու, այլ հենց այդ արվեստում նույն շրջանակում գտնվող երևույթների որոշակի դասակարգում՝ կարևորից անկարևոր. այս դեպքում կարևորը գաղափարի կրողն ու արտահայտողն է, որին ստորադասվում են այլ երևույթներ՝ պատկերի ամբողջացման համար:

Ահա այս հիերարխիկ համակարգը 20–րդ դարի արվեստում սկսվում է շրջվել. «Բավական է շրջել հիերարխիական կարգն ու այնպիսի արվեստ ստեղծել, որտեղ առաջին պլանում են հայտնվում մոնումենտալությամբ օժտված կյանքի չնչին մանրամասները» **(Օրտեգա–ի–Գասեթ Խ., 2019):**

Այս երևույթը Խոսե Օրտեգա–ի–Գասեթի բնութագրումից տարիներ անց իսպանական գրականության մեջ ստացավ առանցքային դեր. ազդվելով դադաիստներից և սյուրռեալիստներից՝ իսպանացի պոետների մի խումբ ստեղծեց ինֆրառեալիզմի շարժումը՝ գերնպատակ ունենալով բանաստեղծության ազատականացումը: Շարժման պոեզիան հակադրվում էր պաշտոնական մշակութային ինստիտուտներին և գրական կանոններին՝ առաջարկելով ազատ և անկանոն կառուցվածք, ինքնակենսագրական ու վավերագրական շերտերի համադրություն:

Բանաստեղծության ազատականացումը բոլոր ժամանակների պոետների գերնպատակներից մեկն է եղել, որը քիչ թե շատ իրականացվել է տարբեր միջոցներով: Իրերի հիերարխիկ կարգը շրջելը գեղարվեստական պատկերավորման առանձնահատուկ միջոց է դառնում Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում՝ ունենալով դրսևորման մի քանի ձև՝ էքզիստենցիալ խնդիրների և կենցաղի բախում, համաշխարհային կարևոր իրադարձություններում ոչ կարևոր մանրուքներին ուշադրության սևեռում, մեծ խնդիրների համատեքստում ոչ կարևորի դերի բաշխում կարևորին և հակառակը:

Էքզիստենցիալ խնդիրները Հովհաննես Գրիգորյանի որոշ բանաստեղծություններում ներկայացվում են որպես ոչ առաջնային: Այսպես, մահվան և կենցաղի ու սովորականի բախումն ու ստորադասումը կարող ենք նկատել «Երբեք չմեռնես, ահա թե ինչ կասեմ քեզ» ժողովածուում տեղ գտած «Կիրակի» բանաստեղծության մեջ, որն առաջին հայացքից շաբաթվա մեկ օրվա մանրամասն՝ ժամ առ ժամ նկարագրությունն է՝ կրկնվող պատկերներով: Վերջին կիրակին, մահը, ինքնասպանության փորձը կամ դրա ցանկությունը, որը կարծես թե բանաստեղծության գլխավոր թեման է և իրերի ու դեպքերի հիերարխիայի գագաթներից մեկը, հայտնվում է միայն վերջին տան մեջ, երբ գրողը, թվարկելով օրվա ժամերը, հասնում է ամենահաճելիին. «Ես մաքուր սափրվում եմ, հագնում տոնական// կոստյումս և օղակն անցկացնելով վզիս՝ հրում եմ….» **(Գրիգորյան Հ., 2010):** Սակայն նույնիսկ վերջին տան մեջ սա զիջում է իր դիրքը, դառնում երկրորդական, քանի որ դրանից հետո էլ գործողությունները շարունակվում են: Բանաստեղծության հիմնական մասում են պատուհանի ապակին կտցահարող ճնճղուկը, մուրացկանը, «Աստծու ճշմարիտ խոսքը» քարոզող եհովականները, «վերջապես վախճանված այսինչ այնինչյանի» թաղմանը հրավիրող ՀԳՄ նախագահը, Մոզամբիկում ծառատունկի համար հազարական դրամ հավաքող թաղի լիազորը, Իսրայելի պրեզիդենտը՝ հին ուղղագրությանը վերադառնալու հրամանով, մածնավաճառը՝ մածունի բանկաները հետ պահանջող, կուսակցությունների հանդիսավոր շքերթը, ինքն ու կինը՝ երեկոյան սուրճը վայելելիս: Ահա այս շարքով պատկերները մուտք են գործում ու դուրս գալիս

բանաստեղծություն՝ ոչնչով չզիջելով և պակաս կարևոր չլինելով այն առարկայից, որը սովորաբար գրականության մեջ գլխավորներից մեկն է լինում:

Հաջորդ դրսևորումը համաշխարհային խոշոր իրադարձության մեջ հայի ճակատագիրը և, որ առավել գրիգորյանական է, համաշխարհային խոշոր իրադարձության մեջ անհատի փոքրիկ կենցաղը ներկայացնելն է: Այսպես, «Հանդիսավոր նիստ՝ նվիրված աշխարհի վերջին և պատմության ավարտին» բանաստեղծության վերնագիրն արդեն իսկ հուշում է համամարդկային և սահմանային իրավիճակը, որին անդրադառնալու է հեղինակը: Այնուամենայնիվ, սատիրիկ իրավիճակ է ստեղծում հեղինակը՝ ներկայացնելով բարձրաստիճան պաշտոնյաներին և սովորական խաբեբաներին, բյուջեի ճեղքվածքին և ՀՖՀ–ի վարկերի օգնությանը **(Գրիգորյան Հ., 2002)**:

Համամարդկային իրադարձությունները հեղինակը շատ հաճախ ներկայացնում է օրվա լրահոսի տեսքով՝ իրականության և ժամանակի ամբողջական պատկերը, առանջին հայացքից առանց այլաբանության, հստակ հատվածականությամբ դառնում է բանաստեղծություն: Եվ ահա գրողը, ներկայացնելով «օրվա լրահոսը», այն գեղարվեստականացնելու փորձեր չի էլ անում, և դեռ ավելի է առաջ գնում՝ այն շաղախում է կենցաղային և երգիծական, իսկ իրականում դառը և ցավալի ընկալմամբ: Բանաստեղծը դնում է իրեն այդ դեպքերի կենտրոնում՝ իր սովորական կյանքը ոչ պակաս կարևորելով Դիանա արքայադստեր թաղումից **(Գրիգորյան Հ., 2002)**: Այստեղ ինֆրառեալիզմը նկատվում է ոչ սովորական արտահայտությամբ՝ ոչ թե խախտվում է իրերի հիերարխիան բանաստեղծության կառույցում, այլ բանաստեղծությունն ինքնին հիերարխիայի խախտում է արվեստի աշխարհընկալման մեջ:

Նկատենք նաև, որ գրողը նմանօրինակ մի շարք բանաստեղծություններով հայ գրականություն է բերում ու կատարելության հասցնում լրատվական–անոնսային բանաստեղծության ժանրը: Սա արդեն ոչ թե բանաստեղծության ապամարդկայնացման արդյունք է (այն խորհուրդով, որ եզրույթին հաղորդել է Խոսե Օրտեգա–ի–Գասեթը) և մաքուր արվեստ ստանալու հնարավորություն, այլ բանաստեղծության մարդկայնացման կատարյալ արտահայտություն է:

Լրատվական–անոնսային բանաստեղծության լավագույն օրինակներից է «Վերջին լուրեր» խորագրով բանաստեղծությունը, որում ժամանակի դեպքերը ներկայացվում են քնելուց առաջ լսած և քնելուն նպաստող երեկոյան լուրերի տեսքով.

Անշուշտ ամենաձեռնտուն և ամենաառողջարարը քնելն է հեռուստացույցի առաջ, հատկապես վերջին լուրերի հաղորդման ժամանակ: Այդպես դու հանգստանում ես առանց համաշխարհային և տեղական կարևոր ու հրատապ իրադարձություններից կտրվելու **(Գրիգորյան Հ., 2010):**

Եվ ահա բանաստղծը մեկ առ մեկ ներկայացնում է օրվա լուրերը՝ բնորոշ մեկնաբանություններով: Եթե պայմանականորեն առանձնացնենք այս լուրերը որպես բանաստեղծության առանձին հատվածներ, կնկատենք հիերարխիայի խախտում հենց այդ հատվածներից յուրաքանչյուրի ներսում. այսպես, պառլամենտի քննարկելիք գլխավոր հարցը նարգիլեի և ափիոնի դեմ պայքարն է՝ «հայ–թուրքական հարաբերությունների կարգավորումից անմիջապես հետո…» **(Գրիգորյան Հովհ., 2010):** Պետք է նկատել, որ այս բանաստեղծության մեջ հեղինակը յուրաքանչյուր հատված ավարտել է կախման կետերով. սա մի տեսակ անավարտություն, կիսատություն է հաղորդում արծարծվող բոլոր թեմաներին և արտահայտում է բանաստեղծի անզոր «անտարբերությունը» իրականության հանդեպ:

…. այդպես էլ չիմանալով, թե ինչ
նվաճումներ ենք արձանագրել սպորտի
և հատկապես մշակույթի ասպարեզում,
որոնցից մեկն էլ այն է, որ ծանր ու երկարատև
հաջողություններից հետո վախճանվել է
մշակույթի վաստակավոր գործիչ…
ափսոս չլսեցի անունը՝
արդեն խորը քնի մեջ էի թաղված…**(Գրիգորյան Հ., 2010)**

Այսպիսով՝ հեղինակը, ստեղծելով մի իրավիճակ, որում կարծես թե ինքն է անտարբերությամբ մոտենում և ներկայացնում իրականությունը, ըստ էության, ցույց է տալիս հասարակության վերաբերմունքը կարևոր երևույթներին:

Լրատվական–անոնսային որոշ բանաստեղծությունների դեպքում վերնագիրն արդեն իսկ հուշում է կառուցվածքը և թեման: Այսպիսի բնույթ ունեն նաև «Տխուր լուրեր Փարիզից», «Ֆրանսիական ճգնաժամ. սկիզբը երեկոյան ժամը 4–ին, կրկնությունն ամեն երկուշաբթի», «Այս գիշեր և վաղը ցերեկը Շիրակի հարթավայրում և Գյումրի քաղաքում սպասվում է առանց տրամադրության եղանակ» բանաստեղծությունները:

Եթե վերոնշյալ օրինակներում գլխավորը ներկայացվում է որպես անկարևոր, ապա կան նաև մի շարք այլ բանաստեղծություններ, որտեղ մեծի մեջ փոքրն է որպես շեղող, ուշադրությունը գրավող դեպք: Հովհաննես Գրիգորյանը նույնիսկ բանաստեղծություններից մեկը հենց այդպես էլ խորագրել է՝ «Շեղումներ»: Այս բանաստեղծության մեջ գործողության երկու պլան կա՝ Երևան–Տանձուտ և Երևան–Փարիզ չվերթները: «Երևան–Փարիզը», որը բանաստեղծական գործողությունների իրագործման հիմքն ու հիմնանպատակն է, սկսվում է կամ այնպիսին է, ինչպիսին որ կա, պակաս կարևորի գործողություններ մտնելու՝ «չեղարկվելու» շնորհիվ: Նախ՝ ինչպես ենք որոշում առաջնային և երկրորդական պլանը՝ բանաստեղծի վերաբերմունքով և տարածված ու իրականության մեջ գոյություն ունեցող դիրք–կարծրատիպով: Այս դեպքում բանաստեղծի վերաբերմունքը լիովին արտահայտված է երգիծանքի միջոցով (սա թերևս ամենատարածված միջոցն է): Ժամանակավորապես հետաձգվում է Երևան–Տանձուտ ավիաուղերթը՝ Տանձուտում օդակայան չլինելու պատճառով… **(Գրիգորյան Հ., 2010)**

Ուրեմն չեղարկվում է այն, ինչը չկա, որի շնորհիվ ստեղծվում է պայմանական իրականություն, որը հնարավոր է դառնում միայն այս գոյություն չունեցողի շնորհիվ:

Իրերի հարաբերությունների ստորակարգման խախտում կարևորից կամ իր նշանակությունից մանրուքների շեղում տեղի ունենում է նաև «Ռոմանս»

բանաստեղծության մեջ: Վերնագիրն իր նրբերանգներով հուշում է, որ հերոսական, հուզական և սիրային պատմություն է սպասվում, և որպեսզի այն «տեղի ունենա», գլխավոր հերոսը պետք է «մեռնի ամենահսկական սիրուց», սակայն առաջ են գալիս բազմաթիվ պատրվակներ. չէ՞ որ անցել են սիրո համար մեռնելու ժամանակները: Եվ ահա հարմար տեղ փնտրող քնարական հերոսի ուշադրությունը շեղում է քաղաքային միջավայրը, հեռուստացույցի ձայնը, տրամվայը և այլն **(Գրիգորյան Հ., 1986)**:

Խոսե Օրտեգա–ի–Գասեթը ինֆրառեալիզմը կամ սուպերռեալիզմը համարում է ռեալիզմը հաղթահարելու միջոց հատկապես դրա՝ իրականության «մանրադիտակային պլանով կյանքը դիտելու» շնորհիվ: Սա, իհարկե, առավել հատուկ է արձակին, և ինքը՝ Խոսե Օրտեգա–ի–Գասեթը, որպես օրինակ է բերում արձակագիրների (Մարսել Պրուստ, Ջեյմս Ջոյս, Ռամոն Գոմես դե լա Սերնա): Հասկանալի է, որ բանաստեղծն իրեն չի կարող թույլ տալ «ավելորդ» բառ, պատկեր, սակայն այս գործիքը հաջողությամբ կիրառվում է հետևյալ մեխանիզմով՝ իրականության խոշորացույցով դիտած միայն մի պատկերի կամ պատկերի մի հատվածի բանաստեղծացումով: Առաջին հայացքից անկարևոր և փոքրիկ բանը դառնում է բանաստեղծություն, քանի որ այն մեծ աշխարհի մի մասն է, սակայն, ի տարբերություն նախորդ օրինակների, այդ մեծ և կարևոր աշխարհը այդպես էլ չի երևում: Այսպես, Հովհաննես Գրիգորյանի «Դատարկ սենյակում զնգում էր հեռախոսը….» սկզբնատողով բանաստեղծության մեջ մի զանգին հաջորդող դեպքերն են՝ կատարվող դատարկ սենյակում, որտեղ փոքրիկ (հետո նաև «ժամանակոտված») սարդն է և այդ սենյակի իրերի աշխարհը **(Գրիգորյան Հ., 1986)**:

Ապամարդկայնացումը, ինչի մասին գրում էր Խոսե Օրտեգա–ի–Գասեթը, ոչ որպես արվեստի զարգացման միտում և ստեղծագործական ուղղություն, այլ որպես թեմա, իր արտահայտությունն է գտել «Նորից օր է….» սկզբնատողով բանաստեղծության մեջ: Այս բանաստեղծության մեջ Հովհաննես Գրիգորյանը ոչ թե այլաբանորեն, այլ ուղիղ (ինչը կարող ենք համարել այլաբանության լավագույն դրսևորումներից) մարդուն հանում է իր պատկերած իրականությունից: Եվ

որպեսզի էլ ավելի ընդգծվի մարդու վերացումը, թողնում է մարդու հանդերձանքը՝ կոշիկն ու վերնաշապիկը, թաշկինակն ու ժամացույցը: Եվ սրանք մտնում են իրենց սովորական գործունեության մեջ՝ քայլում, ժամանակ ցույց տալիս, բայց առանց մարդու **(Գրիգորյան Հ., 1992):** Դադաղորեն մաշվում է այս ամենը՝ ցույց տալով մարդու արժեզրկումն ու կյանքի անիմաստությունը: Սա արդեն ոչ թե արվերստից մարդուն հանելն է, ինչի մասին խոսում էր Խոսե Օրտեգա–ի–Գասեթը, այլ արվեստի մեջ մարդու՝ իրականությունից հանվելը ներկայացնելն է:

Այսպիսով՝ Հովհաննես Գրիգորյանի պոետիկայում ստեղծվում է մի համակարգ, որի շրջանակում առավել կարևորվում են կյանքի ոչ նշանակալի երևույթներն ու իրերը՝ նույն հարթության մեջ դրվելով ընդունված կարևորի հետ, իսկ երբեմն էլ հիերարխիկ համակարգում ավելի բարձր դիրք գրավելով: Սրանով հեղինակը ոչ թե պարզապես կարևորում է անկարևորն ու կենցաղը, այլ սուր, նույնիսկ անսպասելի և անհավանական հարաբերություն ստեղծելով՝ ընդգծում է ստորակարգվածը (իր բանաստեղծության մեջ), ընդգծում այն և ներկայացնում հասարակության վերաբերմունքն ու կյանքի աբսուրդը:

Այսպիսով՝ ինֆրառեալիզմը, որ բանաստեղծության ապամարդկայնացման գլխավոր ցուցանիշերից մեկն էր, կատարելագործվելով և էլ ավելի սրվելով, տանում է դեպի հակառակը՝ բանաստեղծության մարդկայնացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսե Օրտեգա–ի–Գասեթի «արվեստի ապամարդկայնացման» գաղափարն ու Հովհաննես Գրիգորյանի «բանաստեղծության անհետացման» ձևակերպումը, թեև առաջին հայացքից հակադիր են, իրականում առնչվում են նույն երևույթի տարբեր դրսևորումներին: Խոսե Օրտեգա–ի–Գասեթի փիլիսոփայության մեջ ապամարդկայնացումը ուղղված է մաքուր արվեստի ստեղծմանը՝ հեռանալով մարդկային զգացմունքից ու առօրյայից, մինչդեռ Գրիգորյանի մոտ հակառակն է՝ հիերարխիայի խախտման միջոցով բանաստեղծությունը ավելի մարդամոտ ու կենցաղային է դառնում:

Այս համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նույն գեղարվեստական գործիքը՝ իրերի և երևույթների հիերարխիայի շրջումը, կարող է

ծառայել տարբեր, անգամ հակադիր գեղագիտական նպատակների: Եթե Խոսե Օրտեգա–ի–Գասեթի դեպքում դա իրականությունից արվեստի աշխարհ փախուստի միջոց է, ապա Հովհաննես Գրիգորյանի համար՝ իրականության առավել ամբողջական ներմուծում արվեստի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգորյան Հ. (1970),** Թե ինչպես «անհետացավ» բանաստեղծությունը, Երևան, 6 նոյեմբերի, N 45, Գրական թերթ, տե՛ս՝ https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Grakantert/1970/45_ocr.pdf
2. **Գրիգորյան Հ. (1986),** Դանդաղ ժամեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
3. **Գրիգորյան Հ. (1992),** Հրեշտակներ մանկության երկնքից, Երևան, «Զվարթնոց» հրատ.:
4. **Գրիգորյան Հ. (2002),** Կես ժամանակ, Երևան, «Նոր–դար» հրատ.:
5. **Գրիգորյան Հ. (2010),** Երբեք չմեռնես, ահա թե ինչ կասեմ քեզ, Երևան, ՀԳՄ հրատ.:
6. **Օրտեգա–ի–Գասեթ Խ. (2019),** Մշակույթի փիլիսոփայություն, Երևան, «Զանգակ» հրատ.:

REFERENCES

1. **Grigoryan H. (1970)**, T'e inchpes «anhetacav» banasteghc'owt'yowny' /How the Poem “Disappeared/.” Yerevan, November 6, No. 45, Literary Newspaper.
2. **Grigoryan H. (1986),** Dandagh jhamer /Bitter Hours/, Yerevan, “Soviet Writer” Publishing House.
3. **Grigoryan H. (1992),** Hreshtakner mankowt'yan erknqic /Angels from the Sky of Childhood/, Yerevan, “Zvartnots” Publishing House.
4. **Grigoryan H. (2002)**, Kes jhamanak /Half Time/, Yerevan, “Nor-dar” Publishing House.

5. **Grigoryan H. (2010)**, Erbeq chmer'nes, aha t'e inch kasem qez /Never Die, That's What I'll Tell You/, Yerevan, Writers' Union of Armenia Publishing House.
6. **Ortega y Gasset J. (2019),** Mshakowyt'i p'ilisop'ayowt'yown /Philosophy of Culture/, Yerevan, "Zangak" Publishing House.

Асхик Оганян

НАРУШЕНИЕ ИЕРАРХИИ КАК ХУДОЖЕСТВЕННЫЙ ПРИЁМ В ПОЭЗИИ ОВАННЕСА ГРИГОРЯНА

Заключение

Ключевые слова и выражения: *Ованнес Григорян, Хосе Ортега-и-Гассет, суперреализм, инфрареализм, поэтика, нарушение иерархии, художественный метод, современная поэзия, противопоставление важного и неважного.*

В статье представляется сравнительный анализ идеи «дегуманизации искусства» Хосе Ортеги-и-Гассета и идеи «исчезновения поэзии» Ованнеса Григоряна, рассматривается их отражение в поэзии Григоряна. В статье также анализируется эссе Григоряна «Как «исчезла» поэзия», опубликованное в 1970 г. в 45-м номере еженедельника «Гракан терт», которое интерпретируется как отклик на дискуссии в литературной прессе того времени вокруг молодой поэзии и осмысливает «исчезновение поэзии» как процесс её гуманизации.

Цель исследования — выявить, каким образом эти, на первый взгляд, противоположные теоретические подходы сходятся в рамках одного художественного явления — нарушения иерархии вещей. Для раскрытия роли и значения этого явления в поэзии Григоряна применяется сравнительно-аналитический метод, позволяющий сопоставить теоретические позиции двух авторов. Наряду с этим используется текстологический анализ, направленный на изучение структурных, тематических и эстетических особенностей поэтических текстов.

Исследование показывает, что инверсия иерархического порядка становится в поэзии Ованнеса Григоряна особым художественным приёмом, проявляющимся в нескольких формах: в столкновении экзистенциальных проблем с повседневностью, в акцентировании незначительных деталей на фоне глобально значимых событий, а также в перераспределении значимости между важным и второстепенным в рамках более широкого контекста. Вместе с тем демонстрируется, что представленное Хосе Ортегой-и-Гассетом «переворачивание» иерархии, способствующее уходу от реальности в мир искусства, в поэзии Григоряна трансформируется в метод выявления существенных проблем действительности именно через их внешнее игнорирование.

Astghik Ohanyan

VIOLATION OF HIERARCHY AS AN ARTISTIC DEVICE IN HOVHANNES GRIGORYAN'S POETRY

Conclusion

Keywords and expressions: *Hovhannes Grigoryan, José Ortega y Gasset, superrealism, infrarealism, poetics, violation of hierarchy, artistic method, contemporary poetry, contrast of important and unimportant.*

The article presents a comparative analysis of José Ortega y Gasset's concept of the "dehumanization of art" and Hovhannes Grigoryan's idea of the "disappearance of poetry," examining their manifestation in Grigoryan's poetic work. It also discusses Grigoryan's 1970 essay, "How Poetry 'Disappeared,'" published in issue 45 of the weekly *Grakan Tert*, interpreting it as a response to the debates in the literary press of the time surrounding youth poetry and framing the "disappearance of poetry" as a process of its humanization.

The aim of the study is to reveal how these two seemingly opposing theoretical approaches converge in the same artistic phenomenon—namely, the disruption of the hierarchy of things. To explore the role and significance of this disruption in Grigoryan's poetry, the study employs a comparative analytical method to juxtapose the theoretical

positions of the two authors. In addition, textual analysis is applied to examine the structural, thematic, and aesthetic features of selected poetic examples.

The research demonstrates how the inversion of hierarchical order becomes a distinctive artistic device in Hovhannes Grigoryan's poetry, manifesting in several forms: the juxtaposition of existential concerns with everyday life, the focus on insignificant details within globally significant events, and the redistribution of importance between major and minor elements within broader contexts. The study further shows that the inversion of hierarchy described by José Ortega y Gasset, which facilitates an escape from reality into the realm of art, is transformed in Grigoryan's poetry into a method of emphasizing essential aspects of reality precisely through their apparent neglect.

Աստղիկ Օհանյան - Երևանի պետական համալսարանի Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոս: astghik.ohanyan28@gmail.com

Astghik Ohanyan - PhD student at the Department of Modern Armenian Literature and Literary Criticism at Yerevan State University, Lecturer at the College of Humanities and Social Sciences at the American University of Armenia. astghik.ohanyan28@gmail.com

Астхик Оганян - Аспирант кафедры истории новейшей армянской литературы и литературной критики Ереванского государственного университета, преподаватель факультета гуманитарных и общественных наук Американского университета Армении. astghik.ohanyan28@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 04.03.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 23.03.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.